ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2023թ. թիվ 122-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշման 5-րդ հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կանոնադրության 19-րդ կետի 18-րդ ենթակետը, 30-րդ և 31-րդ կետերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 8 հավելվածի.

9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 9 հավելվածի:

10) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 10 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2007 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 14-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 99-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 165-Ա, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 75-Ա և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի հունվարի 27-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 182-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 23-Ա որոշումները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

17/03/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. մարտի 17
ք.Վանաձոր